



ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

հետպատերազմյան շրջանում փաստաթղթերի ձեռքբերման և աջակցության ծրագրերի վերաբերյալ

ԶԻՆԳՐՔՈՒՑՎՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

https://mil.am/hy/news/8929?fbclid=IwAR2CnY7uRWgj0J9_NGm3zBKCg02onTnUtI44cqvuWoTGnEO5ok1XKu8Wm3g

1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցած և գործողությունների ավարտից հետո մարտական հերթապահության ընդգրկված զինծառայողների, զորահավաքային զորակոչով զորակոչված (կամ՝ այլ ընթացակարգերով զինվորական ծառայության ներգրավված) անձնակազմի զինգրքույկներում (7-րդ էջի 16-րդ սյունակ, նոր նմուշի զինգրքույկներում՝ 7-րդ էջի 12-րդ սյունակ), ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայողների հաշվեծառայողական քարտերում և «Հայրենիքի պաշտպանի անհատական գրքույկներում» կատարվում է համապատասխան գրառում, օրինակ՝ «27.10.2020 թ.-ից մինչև 09.11.2020 թ. մասնակցել է մարտական գործողություններին N 00000 զորամասի կազմում՝ որպես գնդացրորդ», կնքվում է զորամասի զինանշանային կնիքով:

2. ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները համապատասխան զորամասերից անհրաժեշտ հիմքերի (գրություն, զորամասի հրամանատարի հրամանի քաղվածք) առկայության դեպքում քաղաքացիների զինգրքույկներում կատարում են համապատասխան գրառումը՝ կնքելով զինվորական կոմիսարիատի կնիքով:

3. Զորամասերից առաքված հրամանների քաղվածքներում չներառված անձնակազմի կողմից տարածքային ստորաբաժանումներ (զինկոմիսարիատ) դիմելու դեպքում գրավոր հարցում է կատարվում համապատասխան զորամասեր՝ նրանց վերաբերյալ տվյալները ճշտելու նպատակով:

Հ.Գ. Զինծառայողները, ինչպես նաև պահեստագործում հաշվառված քաղաքացիները պարտավոր են խնամքով պահել զինվորական գրքույկը, այն կորցնելու դեպքում զինծառայողները անհապաղ այդ մասին զեկուցում են անմիջական պետին, իսկ պահեստագործում հաշվառված քաղաքացիները՝ զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Այդ դեպքում զինվորական գրքույկը համարվում է

անվավեր և տրվում է նոր զինվորական գրքույկ:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=126601>

ՈՎՔԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ

<https://www.arlis.am/documentView.aspx?docid=148984>

Զինճառայող են համարվում`

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և (կամ) այլ զորքերում ժամկետային պարտադիր կամ պայմանագրային կամ զորահավաքային զինվորական ծառայություն անցնող կամ օրենքով սահմանված կարգով պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ու մարտական գործողություններին մասնակցող կամ մասնակցած անձը.

2) տարածքային պաշտպանությանը ներգրավված և մարտական գործողություններին մասնակցած կամ զինվորական ծառայության մեջ չգտնվող ու մարտական գործողություններին մասնակցելու նպատակով կամավորագրված և մարտական գործողություններին մասնակցող կամ մասնակցած անձը (այսուհետ` կամավորագրված անձ):

Զինվորական ծառայության մեջ չգտնվող ու մարտական գործողություններին մասնակցելու նպատակով կամավորագրված և մարտական գործողություններին մասնակցող կամ մասնակցած լինելու փաստը հաստատվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության տեղեկանքով, որի տրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

ՈՒՐ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ԲՍՓ- անվճար խորհրդատվության համար` 060 652872

Բժշկասոցիալական փորձաքննական բաժինների հասցեներ, հեռախոսահամարներ`
<https://hhbsp.am/%d5%a4%d5%ab%d5%b4%d5%b8%d6%82%d5%b4/>

Եթե անձն ունի առողջական խնդիրներ, հաշմանդամության կարգավիճակ ստանալու, ապա նա կարող է դիմել իրեն համապատասխան բուժում կամ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություն (պոլիկլինիկա), որտեղ անհրաժեշտ ախտորոշիչ, բուժական և վերականգնողական միջոցառումների իրականացումից հետո, իսկ տևական բուժում պահանջող հիվանդությունների ժամանակ` նաև բուժման ընթացքում, սակայն ոչ վաղ, քան բուժման սկզբից 3 ամիս հետո, անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում` նրան կուղեգրի բժշկասոցիալական փորձաքննության`

տրամադրելով համապատասխան ուղեգիր (ձև 088):

Բուժող բժշկի (ընտանեկան բժիշկ, տեղամասային թերապևտ, նեղ մասնագետ) կողմից լրացվում է «անձի բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիր (Ձև N 088)» և ներկայացվում է բժշկափորձագիտական հանձնաժողովին:

Ուղեգրի առկայության դեպքում, բժշկասոցիալական փորձաքննության ենթարկվելու նպատակով, անձը կարող է գրավոր դիմել իր բնակության վայրը սպասարկող ԲՍՓ հանձնաժողով՝ դիմումին կցելով առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթեր:

Հաշվառում չունեցող անձինք կարող են ենթարկվել բժշկասոցիալական փորձաքննության՝ ներկայացնելով տեղեկանք փաստացի բնակության վայրից:

Անձին հաշմանդամության սահմանման մասին հանձնաժողովի որոշումը եռօրյա ժամկետում հանձնվում է դիմողին կամ նրա ներկայացուցչին:

1-ին խմբի հաշմանդամությունը սահմանվում է երկու տարի ժամկետով, 2-րդ և 3-րդ խմբերի հաշմանդամությունը՝ մեկ տարի ժամկետով, իսկ «Հաշմանդամ երեխա» կարգավիճակը՝ երկու տարի ժամկետով կամ մինչև 18 տարին լրանալը:

Այլ հարցերի համար անցնել ներքևի հղումներով. անժամկետ հաշմանդամություն, արտոնություններ, աջակցող միջոցներ՝ Պրոթեզներ (վերին և ստորին վերջույթի), կրծքագեղձի էկզոպրոթեզ, ակնագնդի պրոթեզ, ձայնաստեղծ սարքեր և այլն, աջակցող միջոցների համար ո՞ւր դիմել՝ https://www.mlsa.am/?page_id=10837

Հաշմանդամության սահմանման նպատակով բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը և հաշմանդամության սահմանման չափորոշիչները հաստատված են ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 276-Ն և ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» N 780-Ն որոշումներով:

Հղումներ՝ https://www.mlsa.am/?page_id=1317&fbclid=IwAR1ybxPpDLzLBTAf-vcPff1UE1-tiV4OqM7Xk6g-IxnBjhBH9pLbpNjvuMs

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149168>

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=139744>

«ԿԱՄՈՒՐՁ» ԾՐԱԳԻՐ. 6 ԱՄԻՍ ՇԱՐՈՒՆԱԿ ԱՄՍԱԿԱՆ 300,000 ԴՐԱՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Կամուրջ» ծրագրի շահառու են դառնալու այն զինծառայողները, որոնց բժշկական հաստատությունը տրամադրում է եզրակացություն առ այն, որ բուժման ավարտից հետո մեծ է զինծառայողի՝ 1-ին կամ 2-րդ հաշմանդամության կարգ ստանալու հավանականությունը: Շահառու են հանդիսանում նաև ռազմական գործողությունների

ընթացքում ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ճանաչված զինծառայողները:

Եզրակացությունը բժշկական հաստատությունը տրամադրում է՝ առաջնորդվելով սահմանված վնասվածքների և խեղումների ցանկով:

Կամուրջ ծրագրի շահառուների խեղումների ցանկ .

<https://www.1000plus.am/hy/news/2021/01/29/%D5%AF%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D6%80%D5%BB-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%AB-%D5%AD%D5%A5%D5%B2%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80/297?fbclid=IwAR3njEW8CMOY60oEarv0NryR1G5rZzVedsdonUjzQpQBsHpujQJK8FqfMy0>

Ծրագրի շահառու դառնալու համար զինծառայողը կամ ընտանիքը որևէ հաստատություն դիմելու կարիք չունի՝ նրանց հետ կապ կհաստատեն Պաշտպանության նախարարությունից:

Հարցերի համար դիմել socmed@mil.am էլեկտրոնային փոստի հասցեով կամ զանգահարել ՀՀ պաշտպանության նախարարության թեժ գիծի 1-28 հեռախոսահամարով:

Անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին ևս 6 ամիս շարունակ ամսական 300,000 դրամ ֆինանսական աջակցություն կտրամադրվի:

Վերոնշյալ զինծառայողների հարազատները հաշվի պայմանագիրը կնքելու և գումարը ստանալու նպատակով կարող են զանգահարել (010) 513701 հեռախոսահամարին:

<https://www.1000plus.am/hy/news/2021/01/22/%D5%AF%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D6%80%D5%BB-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80/289>

Պաշտպանության նախարարությունից զոհված զինծառայողի դիմում-փաթեթը ստանալուց հետո եռօրյա ժամկետում Հիմնադրամը որոշում է կայացնում հատուցում տրամադրելու վերաբերյալ: Եվս 3 օր պահանջվում է բանկային փոխանցումն իրականանացնելու համար:

Ըստ անհրաժեշտության, Հիմնադրամի շահառու դառնալու և հատուցում ստանալու համար հարկավոր է սահմանված փաստաթղթերի փաթեթ ներկայացնել՝

- ✔ Մարզերում՝ մարզպետարանների իրավաբանական վարչություններ
- ✔ Երևանում՝ թաղապետարանների իրավաբանական վարչություններ
- ✔ Արցախում՝ Պաշտպանության բանակի Սոցիալական վարչություն

Թեժ գծեր՝

<https://www.1000plus.am/hy/news/2020/11/27/%D5%80%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%BF%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A4%D6%80%D5%B4%D5%A1%D5%B6%20%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3/275?fbclid=IwAR3AdAaacMska37efa3CT8jz0AfdJUN0efPcg4RVw>

qiWXhN5AoY05lo7mhk
<https://www.mlsa.am/?p=27232>

Փոփոխություններ են կատարվել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, մասնավորապես՝

- Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է դատարանի կողմից **անհայտ բացակայող ճանաչվել, եթե երեք ամսվա ընթացքում տեղեկություններ չկան** զինծառայողի կամ այլ քաղաքացու գտնվելու վայրի մասին,
- Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացին կարող է դատարանով **մահացած ճանաչվել ոչ շուտ, քան ռազմական գործողությունների ավարտից մեկ տարի հետո**, նախկին երկու տարվա փոխարեն:
 - Հիմնադրամը հատուցումներ կատարում է ՊՆ-ից ստացված դեպքերի վերաբերյալ ամբողջական փաթեթի ուսումնասիրությունից և հաստատումից հետո: Հիմնադրամը որևէ կերպ ներգրավված չէ շահառուների փաստաթղթերի փաթեթի պատրաստման կամ հավաքագրման մեջ:

500,000 ԴՐԱՄ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՅԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

Միջոցառման շրջանակում շահառու է համարվում ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած՝ բժշկական հաստատություններում բժշկական օգնություն և սպասարկում ստացող (ստացած) անձը, **ով չունի հաշմանդամության խումբ կամ ունի կամ կարող է ունենալ հաշմանդամության երրորդ խումբ:**

Սոցիալական աջակցությունը տրամադրվում է միանվագ դրամական օգնության ձևով՝ **յուրաքանչյուր շահառուին 500,000 դրամի չափով:**

Դիմումը ներկայացնելու համար շահառուն, 2021 թվականի փետրվարի 9-ից մինչև ապրիլի 15-ը, online.ssa.am կայքէջից մուտք է գործում համապատասխան ծրագրային միջավայր և ծառայություն է ներկայացնում իր անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը (անձնագիր կամ նույնականացման քարտ), հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և իր բանկային հաշվին կցված վճարային քարտի համարը:

- ✔ <https://dimum.ssa.am/index.php?r=application%2Fwounded-app>
- ✔ https://e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/01/90_1.pdf
- ✔ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=109178>

ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ 1000+ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ

<https://www.1000plus.am/hy/getinsurance>

«Զինձառայողների ապահովագրության» հիմնադրամը հատուցումներ է տրամադրում. յուրաքանչյուր զինձառայողի, որի առողջությանը պատճառված վնասի արդյունքում ճանաչվել է **I կամ II խմբի հաշմանդամ, զոհված կամ անհայտ բացակայող** ճանաչված յուրաքանչյուր զինձառայողի ընտանիքի անդամներին:

Հատուցման չափերն են.

Զինձառայողի աստիճան	Զոհվելու դեպքում	Անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում	Իխմբի հաշմանդամ ճանաչվելու դեպքում	II խմբի հաշմանդամ ճանաչվելու դեպքում
Պայմանագրային կամ պարտադիր ժինվորական ծառայության սպայական կազմի զինձառայող	82 մլն. ՀՀ դրամ *	82 մլն. ՀՀ դրամ*	82 մլն. ՀՀ դրամ*	53 մլն. ՀՀ դրամ**
Պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կամ շարքային կազմի զինձառայող	70 մլն. ՀՀ դրամ *	70 մլն. ՀՀ դրամ*	70 մլն. ՀՀ դրամ*	41 մլն. ՀՀ դրամ**
Տարածքային պաշտպանությանը	70 մլն.	70 մլն. ՀՀ դրամ*	70 մլն. ՀՀ դրամ*	41 մլն. ՀՀ դրամ**

տարածքային պաշտպանությանը կամավորագրված անձ	դրամ *			
Պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպա	58 մլն. ՀՀ դրամ *	58 մլն. ՀՀ դրամ*	58 մլն. ՀՀ դրամ*	29 մլն. ՀՀ դրամ**
Պարտադիր զինվորական ծառայության շարքային զինծառայող	58 մլն. ՀՀ դրամ *	58 մլն. ՀՀ դրամ*	58 մլն. ՀՀ դրամ*	29 մլն. ՀՀ դրամ**

*Գումարի ամբողջ չափից 10մլն. դրամը տրամադրվում է միանվագ, իսկ մնացածը՝ ամսական հավասար վճարներով՝ 20 տարվա ընթացքում

** Գումարի ամբողջ չափից 5 մլն. դրամը տրամադրվում է միանվագ, իսկ մնացածը ամսական հավասար վճարներով՝ 20 տարվա ընթացքում

Զինծառայողը կամ նրա ընտանիքի անդամներն ունեն **լրացուցիչ ամսական 100 հազար դրամ ստանալու իրավունք**, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ զինծառայողն ունի

- երեք կամ ավելի՝ 18 տարին չլրացած երեխաներ կամ
- 23 տարին չլրացած առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակներ կամ
- 18 տարեկան կամ դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակներ, եթե նրանք հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը

Ամսական լրացուցիչ 100հազար դրամ ստանալու իրավունք ունեցող անձը հատուցում ստանալու մասին դիմում ներկայացնելու հետ մեկտեղ պետք է ներկայացնի.

- ամսական լրացուցիչ գումար ստանալու **դիմում**
- այլ փաստաթղթեր:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ԶՈՂԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ և ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Ծրագրի շահառու են և՛ Հայաստանի, և՛ Արցախի քաղաքացիները, որոնց աջակցությունը կտրամադրվի միանվագ դրամական օգնության ձևով՝

1. առաջին խմբի հաշմանդամություն ձեռք բերած քաղաքացիներին՝ 3.000.000 դրամ,
2. երկրորդ խմբի դեպքում՝ 2.000.000 դրամ,
3. երրորդ խմբի դեպքում՝ 1.000.000 դրամ,
4. հաշմանդամ երեխայի դեպքում՝ 3.000.000 դրամ,
5. զոհված քաղաքացիական անձանց ընտանիքներին՝ 5.000.000 դրամ:

Աջակցությունը տրամադրում (նշանակում և վճարում) է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ շահառուի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի հիման վրա:

Շահառուն կարող է դիմում ներկայացնել e-request.am միասնական հարթակի կամ նախարարության պաշտոնական կայքէջի՝ mlsa.am-ի «Գրեք նամակ» բաժնի միջոցով՝ մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը:

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=148385>

<https://www.mlsa.am/?p=26817>

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՄ ՄՆԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ- 6 ԱՄՍՅԱ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

Միջոցառման շահառու է չափահաս քաղաքացիներին ժամանակավորապես հյուրընկալած ֆիզիկական անձը, ում Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող բնակավայրերում սեփականության իրավունքով պատկանում է բնակելի անշարժ գույք և ով հյուրընկալվողին տրամադրում է կացարան 2020 թվականի դեկտեմբեր, 2021 թվականի հունվար-մայիս ամիսների համար:

<https://dimum.ssa.am/index.php?r=application%2Farcaxne>

Սոցիալական աջակցությունը տրամադրվում է անհատույց՝ յուրաքանչյուր ամիս դրամական օգնության ձևով՝ յուրաքանչյուր հյուրընկալված քաղաքացու համար 30 000 դրամ, եթե հյուրընկալի կացարանը Հայաստանի Հանրապետությունում է, և 45 000 դրամ, եթե հյուրընկալի կացարանը Արցախի Հանրապետությունում է:

Ընդ որում, դիմումը պետք է ներկայացվի՝ 2021 թվականի հունվար-մայիս ամիսների

համար՝ յուրաքանչյուր ամսվա 25-ից մինչև հաջորդ ամսվա 5-ը ներառյալ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ- 3 ԱՄՍՅԱ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ և ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

<https://dimum.ssa.am/index.php?r=application%2Farcaxe>

68.000 ԴՐԱՄ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ՝ 4 ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ

2020թ. պատերազմի տնտեսական և սոցիալական հետևանքները մեղմելու նպատակով՝ Արցախի Հանրապետությունում հաշվառված կամ փաստացի բնակված քաղաքացիներին ամսական կտրամադրվի 68.000 դրամ աջակցություն՝ **4 ամիս ժամկետով՝ սկսած 2021 թվականի մարտ ամսից:**

Միջոցառման շահառու կհանդիսանան Արցախում հաշվառված կամ փաստացի բնակված ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս քաղաքացիները (բացառությամբ 18-63 տարեկան, հաշմանդամություն չունեցող արական սեռի անձանց):

Ծրագրի մյուս շահառուները պետք է դիմում ներկայացնեն էլեկտրոնային եղանակով:

Դիմումները կընդունվեն առցանց՝ online.ssa.am կայքէջում՝ 2021 թվականի փետրվարի 25-ից մինչև 2021 թվականի հունիսի 15-ը:

<https://www.mlsa.am/?p=27226>

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՑ ՍԿՍՎԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ 20.000 ԴՐԱՄ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ:

Այն արցախցիներն, ովքեր դեռ չեն դիմել նախադպրոցական տարիքի երեխաներին տրվող 20.000 դրամ աջակցությունն ստանալու համար, հնարավորություն ունեն միջոցառումից օգտվել մինչև մարտի 1-ը: <https://www.mlsa.am/?p=26882>

Մարտի 1-ից հետո ծրագիրն այլևս չի գործի:

Դիմում գրելու անհրաժեշտություն չկա. ծնողը կարող է դիմել Հայփոստի կամ Արցախփոստի ցանկացած բաժանմունք՝ ներկայացնելով իր անձնագիրն ու երեխայի ծննդյան վկայականը:

Ծրագրի շահառու են հանդիսանում Արցախում հաշվառում ունեցող՝ 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծնված երեխաները:

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայտ`

https://employment.am/am/online_application.html?fbclid=IwAR2xcBSc_9vgtmAcqf5H-jrh59HowChDk2wnRthtoeHXBb1wOMIxy6dMrls

Զբաղվածության դաքոց

Դիմել կարող եք մինչև փետրվարի 25-ը` լրացնելով հայտը (այստեղ` <https://bit.ly/3i53kps>) կամ այցելելով բնակության վայրն սպասարկող Զբաղվածության տարածքային կենտրոն: <https://www.mlsa.am/?p=27025>

Ներքոնշյալ երկու ծրագրի դեպքում էլ անհրաժեշտ է **առձեռն դիմում ներկայացնել** Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոն կամ **դիմել էլեկտրոնային եղանակով`** այս հասցեում http://employment.am/?online_application=1 լրացնելով համապատասխան դիմումը:

«Աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում» ծրագրի շրջանակում ամսական **կտրվի 100.000 դրամ գույտ աշխատավարձ**, իսկ եկամտային հարկը և պարտադիր վճարների գումարը կփոխհատուցվի գործատուին: Մինևույն ժամանակ, գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետը ևս կվարձատրվի` ամսական 34.000 դրամի չափով: Գործագուրկ անձը մեկ անգամ կարող է ընդգրկվել միջոցառման մեջ` 3 ամիս տևողությամբ:

<https://www.e-gov.am/gov-decrees/item/35284/>

https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/12/2067_1.pdf

«Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում» ծրագրի շրջանակում արցախցիները հնարավորություն ունեն ընդգրկվել համայնքներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքներում և **մեկ աշխատանքային օրվա համար ստանալ 8.000 դրամ`** ներառյալ եկամտային հարկը և պարտադիր վճարները:

Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման առավելագույն տևողությունը 3 ամիս է:

Համայնքի ղեկավարը կամ նրա ներկայացուցիչը յուրաքանչյուր շահառուի հետ կնքում է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր` հիմք ընդունելով ծրագրի պայմանները:

https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/12/2061_1.pdf

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎՃԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Դեպի Արցախ անվճար տեղի ունեցող ուղևորափոխադրումների գործընթացը շարունակվում է **ամեն օր**:

Նախապես գրանցվելու կարիք չկա:

Ուղևորափոխադրումները կիրականացվեն Երևանի կենտրոնական՝

«Կիլիկիա» ավտոկայանից՝ առավոտյան 06:00-08:00-ն ընկած ժամանակաընթացքում:

ԿՈՄՈՒՆԱԼՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի Հանրապետության կառավարությունը Արցախի Հանրապետության բնակչության կոմունալ ծառայությունների փոխհատուցման աջակցություն է տրամադրվում **2020 թվականի դեկտեմբեր ամսվա** և **2021 թվականի բոլոր ամիսների համար**:

Մեկ բնակիչ-բաժանորդի համար 2020 թվականի դեկտեմբեր ամսվա և 2021 թվականի համար աջակցության առավելագույն չափը սահմանվում է հետևյալ կերպ.

- Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքում մատուցվող բջջային կապի ծառայությունների գծով՝ մինչև 180 րոպե և մինչև 50 հաստ SMS հաղորդագրություն,
- ինտերնետ կապի ծառայության գծով՝ մինչև 1 Մբ/վրկ արագություն.

2020 թվականի դեկտեմբեր և 2021 թվականի հունվար, փետրվար, մարտ և դեկտեմբեր ամիսների համար՝

ա. բնական գազի սպառման գծով՝ մինչև 180 խմ ներառյալ.

բ. էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև 500 կվտ*ժ ներառյալ:

2021 թվականի ապրիլ, մայիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների համար՝

ա. բնական գազի սպառման գծով՝ մինչև 120 խմ ներառյալ.

բ. էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև 400 կվտ*ժ ներառյալ:

2021 թվականի հունիս, հուլիս և օգոստոս ամիսների համար՝

ա. բնական գազի սպառման գծով՝ մինչև 60 խմ ներառյալ.

բ. էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ մինչև 300 կվտ*ժ ներառյալ:

Միջոցառման շահառու են բնական գազի մատակարարման, էլեկտրական էներգիայի մատակարարման, բջջային և ինտերնետ կապի պայմանագիր կնքած Արցախի բնակիչ-բաժանորդները:

ՍՅՈՒՆԻՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 39 ՀԱՄԱՅՆՔ ԿԸՆԴԳՐԿՎԻ ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳՐՈՒՄ.

Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Տավուշի 38 բնակավայրերից բացի, գործող կարգավորումներով նախատեսված արտոնություններից այսուհետ կօգտվեն նաև 2020թ. պատերազմական գործողությունների հետևանքով սահմանամերձ դարձած Սյունիքի և Գեղարքունիքի մարզի 39 բնակավայրերը:

Ըստ այդմ՝ կփոխհատուցվի վերոնշյալ բնակավայրերում ապրող շուրջ 14 հազար բնակչի անշարժ գույքի հարկը (2021 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների դեպքում), 50 տոկոսով կփոխհատուցվեն նաև 2021 թվականի փետրվարի 1-ից հետո սպառած բնական գազի և էլեկտրաէներգիայի, օգտագործած ռոռզման ջրի վճարները:

Սահմանամերձ բնակավայրերում ապրող աշակերտներին դպրոցական դասագրքերը կտրամադրվեն անվճար:

Բնակավայրերի ցանկը.

https://www.mlsa.am/?p=27197&fbclid=IwAR2lwDxtvIV6PZN_XE_reSoW595kfXW5CEiYTNgCEJJCzjH87PLBUdfizV7s

ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՒՄ ՇՈՒՌՆՈՒԽ ԵՎ ՈՐՈՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող բնակելի անշարժ գույքը 2020 թ. պատերազմի հետևանքով կորցրած քաղաքացիները կստանան **միանվագ 300.000 դրամ և ամսական 68.000 դրամ աջակցություն (6 ամսվա համար):**

Միջոցառման շահառու են նաև անչափահաս երեխաները, որոնց հասանելիք դրամական օգնությունը կտրամադրվի ծնողին կամ խնամակալին:

Ֆինանսական աջակցությունն ստանալու համար դիմում գրելու անհրաժեշտություն չկա. օգնությունը կտրամադրվի շահառուների՝ Սյունիքի մարզպետարանից ստացված տվյալների հիման վրա:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շահառուների ցանկը ստանալուց հետո՝ կձևավորի վճարման ցուցակ և գումարը կփոխանցի շահառուի բանկային հաշվին: